№ 120 Յուլիսի 2 (14) 1881 Յուլիսի 2 (14) № 120

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են վիլիային խմբագրատան մէջ։

Ստանալու պիտի են ամեն օր առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Տիֆլիս. Редакція «Мшакъ»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, «Գոլոս» լրագրի յօդուածի առիթով, Նամակ Ալէքսանդրապօլից.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Սպանիա, Բօլգարիա, Յունաստան, Թիւրքիա, Նամակ Թիւրքիայից— ԽԱՌՆ ԼՈՒԻԲԵՐ, — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ, — ՑԱՑՏԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ, — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Թիւրքաց Հայաստան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ԳՕԼՕՍ“ ԼՐԱԳՐԻ ՑՕԴՈՒԱԾԻ ԱՌԻԹՈՎ

—

„Голосъ“ լրագրում (№ 169) մի դէպք է մանրամասն նկարագրված, որ մեզ հայերիս համար հարիւրապատիկ աւելի հանդիսի նշանակութիւն ունի, քան թէ 15 հազ հաստափոր գրքերի հատորները մանրակիտ ապացոյցներով և փաստերով լցված։ Մինչդեռ ամբողջ քաղաքակիրթ աշխարհում ամեն մի ազգ ապրում է բնական կեանքով և կառավարվում ու ներկայանում է իր բանիբուն լուսաւորեալ անհատների միջոցով, մեզանում կան տակաւին շատ անձինք, որոնք—կամ թիւր տրամաբանելով, կամ, որ աւելի հաւանական է, անձնական շահերից շարժված,—ամեն լոյս իրողութեանը հակառակ՝ ազգային գործերի ղեկը ուզում են դնել հոգևորականների ձեռքը, այնպիսի հոգևորականների, որոնց տգիտութիւնը և անընդունակութիւնը, օր աւուր հրատարակվում է, առանց բացառութեան, մեր հայախօս բոլոր պարբերական թերթերի մէջ։ Այդ թիւր տրամաբանները ուզում են մեզ հաւատացնել, որ հայ ազգը կարող է աշխարհում ներկայանալ միմիայն իր հոգևորականների միջնորդութեամբ. նորանք ասում են, որ եթէ մենք վարդապետների և ապիսկոպոսների միջոցով չը ներկայանանք, և եթէ բաց թողնենք հոգևորականներին, այն ժամանակ բոլորովին կը կորչի մեր ազգային նշանակութիւնը և մենք իբրև ազգ կոչնչանանք։

Ահա այդ վնասաբեր տրամաբանութեան հակառակ է ռուս լրագրում պատմվածը։ Անցեալ մայիսի 19-ին բախտաւոր եղան 18 հոգի ներկայանալ Օգոստափառ կայսրին իբրև էստօնեան ազգի պատգամաւորներ, որպէս զի մի կողմից արտայայտէին իրանց ազգի ցաւակցութիւնը անմոռանալի կայսր —Հօր մահուան առիթով, իսկ միւս կողմից իրանց հաւատարիմ հպատակութիւնը յայտանեն։ Ո՞րանք են այդ պատգամաւորութեան անդամները։ Դորանք չեն եկեղեցու պաշտօնները, կամ եպիսկոպոսները, այլ 17 գաղանի ուսումնական, գրականական, գիտական, երկրագործական, բարեգործական, գեղարուեստական ընկերութեանց կողմից ուղարկված անձինք. մէկը պրոֆեսօր է, միւսը լրագրապետ, մի ուրիշը քաղաքային վարչութեան անդամ, և այլն։ Նրանց միջում կայ միմիայն մէկ հոգևորական, և այն էլ ոչ իրբև եկեղեցու ներկայացուցիչ, այլ իբրև էստօնցիների գրագիտական ընկերութեան պատգամաւոր։ Եւ ինչպէս լրագիրը ասում է, դիպուածով պատահել է այդ պատգամաւորութեան մէջ և „Սանկտ-Պետերբուրգսկիյ Վեդոմոստի“ լրագրի խմբագրի 12 տարեկան որդին էլ։

Ուրիշ լուսաւոր ընկերութեանց ներկայացուցիչները կարող են մի ազգի պատգամաւորները լինել և հոգևորականներից աւելի լաւ ներկայացնել այն ազգը. և այս դէպքում պէտք է խոստովանել, որ էստօնցիները ունեն գոլեշ համալսարանում աւարտած հարիւրի չափ հոգևորականներ, որոնց կուրծքը զարդարված է այլ և այլ շքանշաններով։ Բայց նորանք ընտրեցին պատգամաւորներ բուն ազգային ինտելիգենցիայից։

Այդ պատգամաւորութիւնը առաջ ներկայացաւ արտաքին գործերի նախարարին, որ նորանց ընդունեց սիրով, յետոյ գնացին ազօթեցին Նորահաւոյց մատուռի մէջ, այնտեղից հանդիսաւոր կերպով գնացին պետրօպաւլեան մայրեկեղեցին և այնտեղ դրին մի ճարտարահիւս արծաթեայ պսակ յաւերժացնել կայսրի գերեզմանի վրա՝ էստաց և ռուսաց լեզուով արձանագրված „Կայսր Ալէքսանդր Երկրորդին՝ երախտագէտ էստօնեան ազգից։ Եւ այնտեղ ազօթեցին էստօներէն։

Յետոյ այդ պատգամաւորները պետերհօֆ գնալով՝ տարվում են արքունի շքեղ կառքերով կայսերական պալատը և ներկայանում են կայսրին և կայսրուհուն։ Պատգամաւորներից մէկը բռնած է ունենում իր ձեռքին դարձեալ էստօներէն և ռուսերէն գրված հանրագիրը, որ կարդում է նա զգացված ձայնով։ Կայսրը բարեհաճում է ողորմածաբար ընդունել էստօնցիների ընկերութեանց ստորագրութիւններով ծածկված հանրագիրը։ Այդ միջոցին էստերէն „Սանկտ-Պետերբուրգսկիյ Վեդոմոստի“ լրագրի խմբագիրը հրաման է խընդրում և արժանանում է ուղղել կայսրուհուն մի ուղերձ նոյնպէս էստերէն լեզուով, որ թարգմանում է մի ուրիշ պատգամաւոր։ Կայսրուհին զգացված այդ հաւատարիմ հպատակների զգացումներից շնորհակալութիւն է յայտնում։

Ի վերջոյ խօսում են և երկու պատգամաւորներ, որոնցից մէկը սրտանց անկեղծ շնորհակալութիւն է յայտնում Նորին Կայսերական Մեծութեան, որ նա արաւօնութիւն է շնորհել էստօնեան ազգին իրանց լեզուով գրքեր և լրագրեր հրատարակել և կայսրի ու կայսրուհու կենաց համար բարեմաղթութիւններ անելով՝ վերջացնում է պատգամաւորը իր խօսքը այսպէս „Էստօնեան ազգը յոյս ունի որ այսուհետև պէտք է կարողանայ առանց արգելքի արծարծել իր ազգային գրականութիւնը և զարգացնել իր գրականական լեզուն։“ Ի՜նչ ազնիւ և արժանաւոր ու վսեմ հանդէս։

Հիմա այս պատգամաւորութիւնը բազդատելով մեր այն արծաթեայ պսակի հետ, որ եկեղեցու անունով մի քահանայ տարաւ դրաւ անմոռանալի Կայսրի գերեզմանի վրա և յուր ու մունջ յետ դարձաւ, մեր սրտերում ուրիշ տեսակ զգացմունքներ են շարժվում։ Մենք պէտք է միշտ ամաչենք քանի որ սխալ դիրք ենք բռնում

ԹԻՒՐՔԱՑ-ՀԱՅԱՍՏԱՆ

Ա. ՄԱՍԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

—

Վանայ ծովը պէտք է վեր առնել նաև իբրև յարաբերութեան ամենակարճ ճանապարհը բոլոր շրջակայ ծովափնեայ գաւառների, ինչպէս Արճիշայ, Արձկէի, Ախլաթի, Մանազկերտի, Կարճկանից, նաև Բազիշոյ, Մշոյ և Կարնոյ հետ, եթէ չոգենաւի չինութիւնը գլուխ գայ, դա մեծ գործ կը տայ վանայ առևտրին։ *)

Վանայ առևտրական շրջանը շատ նեղ է, դա կատարվում է նահանգի գաւառների մէջ։ Նա յարաբերութեան դիւրին և հասարակ ճանապարհներ անգամ չունի. կառավարութիւնը պարտք չէ համարել այդ կարևոր կէտի վրա մտածել, դրա համար էլ վանայ վիլայէթը բոլոր հաղորդակցութիւններից կտրված մի անծանօթ աշխարհ է։ Կ. Պօլսից Վան հեռագրատուրը ամիսներով է հասնում, փոստային հաղորդակցութիւնը անկարգութեան պէս անկարգ է, բայց և այնպէս պատիւ այդ քաղաքի վաճառականներին, որ անտանելի դժուարութիւններով ստանում են Կ. Պօլսից եւրոպական ապրանքներ, Պարսկաստանից բամբակ, երկաթ, բրինձ, Ամերիկայից նաւթ, իսկ Ռուսաստանի հետ ոչ մի հաղորդակցութիւն չունեն։ Չը նայած որ երկաթ, բրինձ *) պարսիկները Ռուսաստանից են փոխադրում Թաւրիզ և այնտեղից Վան, չը նայած, որ ռուսաց սահմանից մինչև Ականց նաւահանգիստը երեք օրվայ ճանապարհ է, բայց թիւրքերը աշխատել են անանցանելի առնել այդ ճանապարհը, որպէս զի ազատ մնան Սարի-Կամաուրի (դեղին անհատաւ) խմորից։

Ճանապարհների այդ վիճակը արգելում է բոլորովին վանայ նահանգի արդիւնաբերութիւնքը արտահանել, դրա համար էլ վանի նահանգից վաճառահանվում է միայն կեաժ (չուռ այծի մազ) և նրանով գործված չալեղէններ, նժոյգներ, ընկուզենու կոճղ և տառեխ ձուկ։

Արհեստները նահապետական ժամանակից սկսածի չարունակութիւնն են։ Բազմաթիւ կաշեգործներ, ներկարարներ, չիթի չինողներ կան, որոնց գործը թէև կոպիտ, բայց դիմացկուն և գաւառների միմիայն գործածականն է։ Վերջին տարիներին Թոխմախեան եղբայրները բարակ բամբակեղէնների համար մի գործարան բացին, որոնց մանածը եւրոպացիքն են ստանում։

Մի գործարան ևս բացված է եւրոպական եղանակով կաշիներ պատրաստելու։ ազգայնութեան զգացմունքը երիտասարդների մէջ արագ զարգանում է։ Ընթերցարանի և լսարանի ծառայող մի քանի ընկերութիւններ կան, որոնցից նշանաւորը խնամատար ընկերութիւնն է, որ 18 որբեր է խնամում։

Քաղաքում և Այգեստանում բնակվող հայերի թիւն է 18.965։ Թիւրքաց թիւը 8450։ Հայոց վարժարաններ 8-ին, որոնցից մինը միայն վերա-

*) Չոգենաւի ընկերութիւնը արդէն արգելքներին յաղթեց. նա ստացաւ կառավարութիւնից իրաւունք (ինթիազ) և բաժանորդագրութեան ստորագրութիւնը արդէն թէ Կ. Պօլսում և թէ Վանում ոկսած է։ Թիւրքաց կառավարութիւնը մեծ դժուարութիւն հանից ընկերութեան դէմ. նա կարծում է թէ հայերը չոգենաւը ապստամբութեան համար են պատրաստում։ Դորա պէս և թիւրքերը ամեն բարեկարգութիւնից խըրտնում են։ Չոգենաւի համար կարճկանից ծովափնեայ գաւառի հանքեր առատ և ընտիր քարածուխ ունեն պատրաստ։

*) Պարսիկներ բրինձը Երևանեանը նահանգիցն են առնում։

բերում է գեղեցիկ սեռին, 1460 աշակերտներ, 240 աշակերտուհիք, 12 եկեղեցիք։

2.

Թ ի մ ա ր

Թիմար գաւառը Վանայ շրջակայ գիւղերն են. հնում կոչվում էր Տօսպ։ Վարագայ լեռը իր մանր թեներով և արևմուտքից Վանայ ծովը շրջապատում են այս գաւառը։ Օդը բարեխառն է, ջրերը մեծ մասամբ դաշտային։ Աշակութիւնը ծաղկած չէ։ Ջուրը քիչ է, դորա համար էլ Վարագայ լեռան ջրերը ժողովվում են երեք լճերի մէջ, որոնցից օգուտ են քաղում և Վանայ այգեստանները։ Վանից 3 ժամ հեռաւորութեամբ Արջակ գիւղի մօտ մի բնական լիճ կայ, որ խիստ աղի, դառն է և անկենդան։ Չը նայած նրա անկենդանութեան չրջակայ գիւղացիք ստեղծել են նրա համար յաւերժական բնակիչներ, հրեղէն ձիեր և գոմէշներ, որոնք երբեմն դուրս գալով խառնըվում են իրանց նմանների հետ և ազնուացնում են կենդանեաց ցեղը։

Վանայ մերձակայ գիւղերը՝ ինչպէս Աւանց, Ամիւր, Շահրաղի, Քոչանի զարդարված են այգեստաններով, որոնց թէ պտուղները և թէ գինին ընտիր են։ Ջանիկ գիւղը մեծ աղի հանքեր ունի, Էրմանց գիւղը—ածխահանք։

Այս գաւառի միջից անցնում է Սև գետը, որ Մարմետ գիւղի միջից անցնելով, եկմալ գիւղի առաջից թափվում է ծովը։

Աւանց գիւղը վանայ նահանգիստն է։ Այս գիւղի բնակիչները արևգակնային կրակով չոգիացնելու միջնորդութեամբ, ստանում են ծովի ջրից մի տեսակ աղերի և նատրոնների խառնուրդ, որ բնակիչներից բարակ է անուանվում. դա գործ է ածվում օճառագործներից օճառաշինութեան համար, չոգարաններում, լուացարաններում, որ մաքրող և միանգամայն մազեր փափկացնող յատկութիւն ունի. տանտիկիններն դժարեփ ընդունում են գիւղերից գնորեպ դարձնում դրանով։

Թիմար բոլոր գաւառների մէջ ամենաազգատն է թէ բնականապէս և թէ նիւթապէս։

Դիւղերի թիւ	118
Հայերի թիւ	38,889
Թիւրքերի թիւ	230
Վարժարաններ	14
Աշակերտներ	2,800
Եկեղեցիներ	65
Վանքեր	13

Միայեալ ընկերութիւնը այս գաւառիս մէջ երեք վարժարաններ է բացել՝ Ավիւր, Խառակոնիս և Կիւանենց գիւղերում։

3.

Բ ե ր կ ր ի

Բերկրի, հնում Առբերունիք, վանայ հիւսիսային կողմն է, Թիմար, Խոշաբ և Արճէշ գաւառների մէջ։ Վանէն 12 ժամ հեռաւորութիւն ունի. գաւառագլուխն է Բերկրի բերդաւանը, բայց այժմ այն պատմական Բերկրին չէ մնացել. երևում են, այո, հին բերդի մնացորդներ և աւերակների մնծամեծ կոյտեր, որոնց վրա չինված են ողորմելի խղճիկներ։ Այս վերջին ռուս-թիւրքական պատերազմին, Բերկրին քանակատեղի էր տաճիկ զօրաց, որոնց կեղեքող վարմունքից, մնացած բոլոր հայ բնակիչները փախան և ցրվեցան։ Մնացել են մի քանի տուն թիւրքեր, ինչպէս այդ աւերակների բուներ։ Այս գաւառում նշանաւոր է Տէր-Յուսկան որդոյ վանքը, որի շուրջը մի քանի բնական քարայրներ կան։ Բէնդիմահու գետը բարձրացած լինելով ողողում էր Փշիկ-գոմբէթի կամրջի ձախ թևը ու անկարելի էր անցնել և ուղղակի ճանապարհով Արճէշ գնալ, հարկ եղաւ 4 ժամ աւելի պտոյտ տալ, սատանայի կամուրջին անցնելու համար։

Այդ հին կամուրջը որ Բերկրու մօտն է, մի նկարչական տեսարան է ներկայացնում։

Բէնդիմահու գետը վանայ ծովի ամենամեծ գետն է, որ քարկ օրօրանի մէջ արնթաց վա-

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՒԹԵՒՆ ԴԱՒԹԱՊԱՀՈՒԹԵԱՆ

ՌՈՒՍԻԱ

Ս.-Պետերբուրգ, 23 Յունուարի. Ներկայ ամսոյ 25-ին Ս. Գերագոյն Սինոդի անդամներ Նիկանոր արքեպիսկոպոս Խերսոնի եւ Տաւրիդեայ, Պալադիոս արքեպիսկոպոս Կազանի եւ Սվիյաժսկի, Սերգիոս արքեպիսկոպոս Վոլոկոլամսկի, Սիմեոն արքեպիսկոպոս Տուլայի եւ Բելեւի, Ամբրոսիոս արքեպիսկոպոս Վոլինի եւ Ժիտոմիրի, Վենիամին արքեպիսկոպոս Կալուգայի եւ Բորովսկի, Պալլադիոս արքեպիսկոպոս Ռիգայի եւ Միտաւայի, Սերգիոս արքեպիսկոպոս Ֆինլանդիոյ եւ Վիբուրգի, Ներսէս արքեպիսկոպոս Թիֆլիսի եւ Մծխեթայ, Ներսէս արքեպիսկոպոս Երեւանի եւ Նախիջեւանի, Նիկոդիմոս արքեպիսկոպոս Կիշնեւի եւ Խոտինի, Նիկոդիմոս արքեպիսկոպոս Ռոստովի եւ Նովոչերքասկի, Ամֆիլոք

Նորին Վեհափառութեան Տէր Տէր Գէորգ Դ-ի Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ս. Էջմիածին գալուստը

Ս. Էջմիածին, 3 յունիս 1881

Նորին Վեհափառութեան Տէր Տէր Գէորգ Դ-ի Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ս. Էջմիածին գալուստը տեղի ունեցաւ երէկ, Կիրակի, յունիսի 2-ին։ Ժամը 10-ին առաւօտուն Վեհափառ Հայրապետը Իւր Սրբազան Ընտանեաց հետ, Իւր Գահակալական Ս. Աթոռի Ս. Ներսիսեան Վանքի Առաջնորդարանի առջեւ, ուր հաւաքուած էին Ս. Էջմիածնի Վեհարանի Պաշտօնեայք, Վանքի Միաբանութիւնը, Ս. Էջմիածնի Ազգային Վարչութիւնը, Ս. Էջմիածնի Ազգային Ժողովի Անդամները, Ս. Էջմիածնի Ազգային Դպրոցի Աշակերտութիւնը, Ս. Էջմիածնի Ազգային Հիւանդանոցի Բժիշկները, Ս. Էջմիածնի Ազգային Դպրոցի Ուսուցչութիւնը, Ս. Էջմիածնի Ազգային Հիւանդանոցի Պաշտօնեայք, Ս. Էջմիածնի Ազգային Դպրոցի Ուսուցչութիւնը, Ս. Էջմիածնի Ազգային Հիւանդանոցի Պաշտօնեայք, Ս. Էջմիածնի Ազգային Դպրոցի Աշակերտ